


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒԿ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնութիւն ԱՐՅԱԼՈՅՍ Լ. ԿԱԻՐ ԳԱՅՐԻԷ (Եգիպտոս)

Adresse:

E. TOROSSIAN Direct.-propr. du Journal Arménien ARCHALOUYCH LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԻՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔ Տարեկան 100 րիւի հարկաւ ողջ տարեկան... 60 Կեցակաւ... 50 Երկրորդ տարեկան... 20 Կեցակաւ... 12

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ Եւ Թղթատարի ծածկը Խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք Եւ չեն տուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելու են:

ԱՐՅԱԼՈՅՍ ԶԱՅԱՍՏԱՆՍԵԱՅ

Ողջունք քեզ, ո՛վ Հայաստանեայց Թագուհի, է՛ր զխոր եւ ինչո՛ւ սպիտակ ծախի կը մարտնչես... ինչո՛ւ սիրոյ է այսպիսի... Ի՛նչ կը խնդրես այս միգրանտ երկրից սակ:

Ի՞նչ մայրս եւ դու, քան թէ քեզ զրկես, զիս՝ զիս, ծոցիդ մէջը ծախիս անուշ Եւ Դուստրիս, Թո՛ղ այդ կրակով այս կեանքիս մեք եւ այրիմ, Բայց զաւակդ եւ, քո՛ղ որ ծոցիդ մէջ մեռնիմ:

Ի՞նչ մայրս եւ դու, գորգուրակով զիս ծրնար, Մտիս մէջը կրակ մը դրիր բոցավառ, Թո՛ղ այդ կրակով այս կեանքիս մեք եւ այրիմ, Բայց զաւակդ եւ, քո՛ղ որ ծոցիդ մէջ մեռնիմ:

Երագիս մէջ ծախիս մը դրեցի, Միջ մը կանայ իրեկ քոյիկի կը ծրնար, Ան իր բուսիկն վարայ շուշիկ կ'օրորուէր, Կոկոն մը եւր իր ծրիկիկն դուստր կ'արկէր:

Անցայ հովիտ մ'ուն՝ բոցիկի մը սիրունիկ, Եւ կ'որոտուէր ինչ ծաղիկներ իր փոքրիկ... Ցատեւուն մէջ այն բոցիկը չէ՛ր անյայտ, Կը դառնային ինչ ծոցիկն արշապնայ:

Կ'անցնի ծաղիկն՝ այդ ծիլ կուսայ կոկոնիկ, Մեռնիկ ծաղիկն՝ այդ վա՛ռ է յոյս բուսիկիկ, Մարդն ալ վերջ մտնում վարայ յոյս մ'ունի... Կը մեռնի մարդն՝ այս յոյսն է միշտ կեանքիս:

Ի՞նչ յոյսս եւ դու, որ օրացիս միջը ցայտար, Ո՛ր ալ ըլլաւ, միջեւ յայտարն հեռաւոր, Իրողդարով իր ի սոսն՝ հեռուէն, Մոցիդ մէջը կ'որոտուէր զարեւոյ իմ քոկոնիկ:

Օ՛ր անց որեւէն, ո՛վ Հայաստանաց Թագուհի, Վանքն՝ վիշտեղ, ու քո սպիտակ ծախի, Չոյց զուսիկներ արթն ծախիցի սակ պս յոյս, Ժպտիսներուդ հրապո՛րն ըլլան խանդավառ:

Ի՞նչ մայրս եւ դու, գորգուրակով զիս ծրնար, Մտիս մէջը կրակ մը դրիր բոցավառ, Թո՛ղ այդ կրակով այս կեանքիս մեք եւ այրիմ, Բայց զաւակդ եւ, քո՛ղ որ ծոցիդ մէջ մեռնիմ:

ՀԱՅՐՈՐԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԱԺԱ ՏԱՏԵԱՆ

Ահաւաստի բարձր Անճառարութիւն մը՝ որուն վրայ կը խօսուի քաւաստուն երկար տարիներէ ի վեր՝ իբրև թուրքիոյ Պետական մարդ, իբրև աշխարհամասօթ մեծ դիւանագէտ և իբրև Ազգի մարդ՝ որուն մահը եկաւ մեծ պարսպ մը թողուլ ազգային ու դիւանագիտական շրջանակներուն մէջ, Մարդիկ կան՝ որ կը մեռնին, իրենց հետ անյայտացնելով նաև իրենց յիշատակը, մարդիկ կան՝ որ իրենց անունին շուրջը կը փափաքին մասնաւոր յիշատակ մը թողուլ ու անմահացնել զայն իրենց մահուանէն ետքը, իսկ՝ մարդիկ ալ կան՝ որ աշխարհի ընդհանուր պատմութեան մէջ մեծամեծ էջեր կը գրուեն ու երբ, հոսկ ուրեմն, գերեզմանակալ լուծեան մէջ, իրենք ալ կը լուեն մշտնջենայէս, պատմութիւնը յաւիտեան կը խօսեցնէ զանոնք և ահա այս վերջին դասակարգին մէջ կը պատկանէր Յարութիւն բաշա Տատեան, ինչպէս եղան Նուպարներ, Վահաններ, Ազաթօններ, Օտեաններ, Տալուտներ՝ որոնց նմանները, խիստ փոքր թուով, ազգի մը մէջ

դարաւոր ժամանակներու ծնունդները կըրնան ըլլալ միայն: 1859 թուականը սկիզբն է Յարութիւն բաշայի հանրային գործունէութեան՝ Պետական գործերու մէջ, որոնք տարին բարձրացուցին զինքը մինչև Վէտիկութեան ամենաբարձր աստիճանը և, եթէ այս մեծ մարդը մնաց միշտ իբրև թուրք Պետութեան մը Արտաքին գործոց նախարարութեան Խորհրդակցանքի առաջնորդը, նա՛ր և նոյն փափուկ Պաշտօնէութեան նախարարը, պատճառը ուրիշ բան չէր՝ եթէ ո՛չ, իր անունին Յարութիւն ըլլալը՝ որ հակադրեցութիւն մը ունէր Իսլամ մտայնութեան վրայ, և սակայն, միշտ այդ քրիստոնէայ Յարութիւնն էր՝ ինչպէս երբեմն Վանքն մը Արքայութեան գործոց նախարարութեան մէջ՝ բուն ղեկավարը այդ բարձրագոյն Պաշտօնէութեան ու դերակատարը դիւանագիտական ամենակնճառ խնդիրներու թուրք և եւրոպական Պետութեանց միջև, և նոյն Յարութիւնն էր որ՝ իր անվիճելի հանձնարումը, լուծումն կ'ընծայէր ամեն այդ խնդիրներուն՝ զո՛հ թողով՝ իր ծառայած Պետութեան հետ, նա՛ր և Օտար Պետութեանց Դիւանագիտական Մարմինը: Արշապույտ բովանդակ էջերը չի պիտի բաւէին գուցէ եթէ պատմէինք Յարութիւն բաշայի, սոյն կէս դարու ժամանակամիջոցի մէջ, վարած զանազան Պաշտօններուն առթիւ ցոյց տուած գերազանց ձեռնհասութիւնը, միայն սակայն բանք որ՝ այսօր, աշխարհի ընդհանուր դիւանագիտութիւնը կը խոստովանի թէ՛ Տատեան Յարութիւն բաշայ առաջնակարգ դիւանագէտ մըն էր: Գործ մը յառաջ տանելու համար՝ միջոցն ու ժամանակը զանազան, պարագաներէն օգտուելու օտար դիւանագէտներու օժանդակութիւնը շահել, խնդրոյ մը զօրաւոր կողմերը միտնել, գտնել ու ցոյց տալ, ո՛ր և է ծանր առարկութեանց հանդէպ շինարարիկ ու ամեն ծանր խնդիր պաշարելու թիւնով մտիկ ընել՝ իր գործունէութեան միակ յատկանիշներն էին՝ որոնցմով գլուխ կը հանէր ամէն գործ և կը լուծէր ամեն խնդիր՝ որոնք անհնարին և անլուծելի՝ իսկ կը կարծուէին ամենէն բարձրագոյն դասակարգներու կողմէ: Տատեան Յարութիւն բաշայ, շատ քիչ ընդհատումներով, գրեթէ երեսուն տարի վարեց Արտաքին Գործոց նախարարութեան Խորհրդակցանքի պաշտօնը և այս երկար ժամանակամիջոցին մէջ, չէ՛ր կրնար ըսել թէ՛ իր կողմէն գրի առնուած ու եւրոպական Պետութեան մը խրկուած ո՛ր և է ծանօթագիր՝ իր սպասած արդիւնքն յառաջ չէր բերած, և կամ, թուրք ու եւրոպական Պետութեանց միջև ծագում առած ո՛ր և է խնդիր իր գոհացուցիչ լուծումը չէր ըստացած, այնչափ ներհուն էր իր հմտութիւնը դիւանագիտական գործերու մէջ, այնչափ մեծ գիտակցութիւնն ունէր այն իր փափուկ պաշտօնին ու միջամտած խնդրոյն կարեւորութեանը: Այս անտրամախի հանգամանքներով ահա, Յարութիւն բաշայի անունն ու համբաւը պատմական դարձած են քաղաքական աշխարհի առջև և իբրև Հայ ազգի պատկանող նշանաւոր անձնաւորութիւն մը, իբրաւ մեծ պարսպ մը կը թողու, իր

մահուամբ, Հայ ազգին մէջ՝ որ միշտ յարգած է զինքը, իբրև Հայ եկեղեցւոյ հորազատ մէկ զաւակը՝ որ իր դիւանագիտութեամբ հանդերձ զարմանալի կերպով յանձին կը միացնէր նաև կրօնական շերտեան դուրսէն մը՝ իրարու հակընթաց այդ երկու յատկութիւնները սքանչելապէս հաշտեցնելով իր բարձր գիրքին վրայ: Տատեան Յարութիւն բաշայ, սակայն, իր դիւանագիտական բարձրութեամբ ըմբռնելով, ստանալի գրեթէ ամբողջ ի վեր, նսեմացուց իր անունն ու համբաւը ազգային շրջանակին մէջ: Նա՛ր ունեցած դափնին շնորհիւ, կրնար, ինչպէս կրցան Պէդճեան Յարութիւն, և Տատեան Յարութիւնն և Պօլս պէյըրը իրենց ո՛չ այնքան դիւանագիտութեամբ, ընել այն բաները զոր չունէին ընել: Յարութիւն բաշայ, Իզմիրլեանի Պատրիարքութեան է՛ն սագնապակց օրերուն մէջ, կերպով մը խորհրդակցեց ու սրտակիցն համարուած էր անոր, հակառակ Նուրեանի՝ որուն անհշուտ թշնամին էր, և սակայն՝ փոխանակ, ինչպէս որ կրնայ, իր դիւանագէտի բովանդակ կարողութիւնն ի գործ գնելով շարեւթ աշխատանքում, գծուէր զիջութեամբ մը համակերպեցաւ Մուլլանին, համոզեց իզմիրլեանը՝ որ հրաժարի Պատրիարքական Աթոռէն և վերջապէս խաբեց զայն՝ հաւատացնելով թէ՛ միայն երբ ամիս պիտի մնայ Երուսաղէմ, և այսպէս հեռացուց իզմիրլեանը Պօլսէն ի հանդուստը զանին: Յարութիւն բաշայ Տատեան կրնար, ինչպէս կրցեր էր պետական շատ փչտ խնդիրները լուծել, եթէ ո՛չ հիմնապէս գէթ իրարիկ եղածին չափ, ազգային խնդիրներուն օրինաւորութիւն մը ընծայելու միջոցները գտնել, արտաբանելու ազատել, վարչական գործառնութեանց օրինական ընթացքը չի խախտել, ազգայնաց իր լեկեկին դիւրութիւններ շնորհել ալ, ևն: սակայն, ընդհանրապէս, վերջին տարիներս, ազգային վարչութեան իբրև Ատենապետ, լի կ'իր վեհապետին բացարձակ կամեցը հլու գործակատարն եղած էր: Յարութիւն բաշայ Պատրիարքարան կ'երթար՝ այն ատեն միայն՝ երբ սուրբանին բացարձակ մէկ հրամանն ունէր հողորդելու Պատրիարքին կամ ազգային վարչութեան, հրաման որ կը հակառակէր անշուշտ ազգային օրինաց և զոր չէր կրցած յետաձգել ալ իր այնքան մեծ դիւանագիտութեամբն ու ազգեցութեամբը, և ահա այս պատճառաւ, սրբացեալ բաշայ կորցնցուցած էր իր համբաւը ազգին մէջ: Չենք կրնար ըսել թէ՛ նա չէր սիրեր իր ազգը, սակայն չենք քաշուիլ նաև ըսելու թէ՛ կը սիրէր այնչափ որչափ օտար մը կրնայ արգահատել Հայ ազգին արկածախից դժբաղդութեանը վրայ: Արքայիկ կը խոստովանին որ՝ Յարութիւն բաշայ, իբրև Պետական Բարձր պաշտօնատար մը, իր փափուկ գիրքին մէջ, ինչպէս նաև ներքին քաղաքականութեան հանդէպ, չէ՛ր կրնար իր ազգի գործերուն մասին, սուրբանին կամքին դիմադրել, կը խոստովանին նաև որ իբրաքանիւր ոք, իրեն համար, գործունէութեան որոշ ասպարէզ մը ունի և Յարութիւն բաշայ իր

կեանքին ամենածանր զբաղումներուն մէջ ժամանակ չէր կրնար գտնել ազգային գործերով ալ զբաղելու և կամ՝ այն գործերուն մէջ իր գործունէութեան յարմար ապագա ընդ մը չէր կրցած գտնալ, սակայն պարզ խորհրդածութիւն մը կրնայ հաստատել թէ՛ ազգիս մէջ տեսնուած են Յարութիւն բաշայի նման պետական գործերով զբաղած մարդիկ՝ որոնք, ի մէջ այլոց, իրենց ազգին ալ բարոյական մեծ ձեռնուորութիւններ ընելէ չեն դադարած երբէք: Միջ կրնայ ուրանալ Պէդճեան Ամիրայի ազգասիրական մեծ գործունէութիւնը՝ Պետական գործոց ամենածանր և ամենատագնապակց զբաղումներուն մէջ: Միջ է թի՛ք, դարու սկիզբը իր ժամանակին քաղաքականութեան փափուկութիւնը չ'ունէր, բայց Պէդճեան իր ժամանակի քաղաքականութեան մէջ, առիթներէն օգտուելու և ըստ այնմ իր ազգին ներթափան կամ բարոյական բարձր մը ընել իրեն ըսկըզուրք ընտրած էր որքան սկզբունքն էր իրեն՝ միշտ հաւատարմաբար ծառայել իր պետական ասպարէզին մէջ, իբրև ճշմարիտ կրօնասէր և ազգասէր և իբրև հաւատարմ ու սիրող իր ծառայած թագաւորին՝ տալով միշտ և զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Կրնայ ուրացուիլ միթէ Պաշտան կարպետ Ամիրայի ու իր որդւոյն Իսթրիլանտակ ներկողոս պէյի ազգասիրական արդիւնաւոր գործունէութիւնները իրենց պետական կան ծայրագոյն զբաղումներուն մէջ: Իսկ սրբացեալ Նուպար բաշայ... միթէ Պետական մարդ չէր ան, միթէ նուազ դիւանագէտ և աշխարհամասօթ էր քան Յարութիւն բաշայ, և սակայն նա երբէք չէր մոռցած թէ՛ ինքը Հայ ազգին զաւակն է և իր ազգի զաւակներուն օգտակար ըլլալ իր սրբազան Պարտականութիւնն է: Արդ երբ Յարութիւն բաշայի կեանքը կը գծենք իր ցաւով մահուանէն ետքը, անաչառ ըլլալու համար հետեւեալ խորհրդագրութեանց մէջ կ'ամփոփենք մեր խօսքը՝ իբրև համակրող մը սրբացեալ բաշային սակայն աւելի համակրող մը՝ ճշմարտութեան: Ուրեմն հարկ է խոստովանել թէ՛ Տատեան Յարութիւն բաշայի կեանքը փայլ ըստացած է միմիայն Պետական գործերուն ուրուրուած դիւանագիտական հանձնարքներով: Այս կեանքի մէջն է սրարքա՛րե շատ քիչը ցոյց տուած են իրենց անձին վրայ նոյն արժանիքը՝ զոր Տատեան անքան կատարեալ ձեռնհասութեամբ ցոյց տուած: Յարութիւն բաշայ, բառին բուն նշանակութեամբ դիւանագէտ մըն էր քան վարչագէտ մը՝ ուստի նա անկարող եղած է ազգային վարչական գործերու մէջ ձեռնհասութիւն ունենալ: Բայց և այնպէս, Յարութիւն բաշային մահուամբ, մեր ազգը կը կորսնցնէ մեծ հանձար մը՝ որ կ'ապացուցանէ թէ՛ Հայ ազգին մէջ չ'են պակասած ու չի պիտի պակսին դիւանագէտներ, ինչ որ ազգի մը քաղաքական ինքնուրոյն վարչութեան ամենամեծ փաստերէն մին է հանգէպ եւրոպիոյ: MERO WIG

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ԱՐՄԱՆՈՅԻ բաժանորդագրութեան և այլ ամեն կարգի ծագարանական յանձնարարութեանց համար ուղղակի պէտք է գիտել խմբագրութեան, կամ գիրութեան համար, ՏԻՍԻ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՅԵԱՆԻՆ, ի Շարա Ապտ-իւ-Ազիզ :

Եւ ի Պապ-էլ Խալիփ, ծխալուծառ Մալ-րիտիսի ճիւղին գործակատար Տիար ԲԻՍՏՈՏՈՒՐ ԹԷՎԷՔԷԼԵԱՆԻ :

ՊԵՏԻՐ ԿԱՅ

ԱՐՄԱՆՈՅԻ Ի համար յալոյակ ցրուելի մը : Երեկոյացողը երաշխաւորեալ ըլլալու է և պէտք է պայմանաւորուի մէկ տարուան կամ առ նուազն վեց ամսոյ համար :

Պէտք ունինք նաև ուսանող գրաւորներու : Փափաքողը կրնան գիտել « Արշալայ » ի խմբագրատունը, ի Պապ-էլ-Խալիփ Մանսուր փաշա Խալիփ, Մուհարէմ պէյի գեղարանին քովի տան վերի յարկը :

ԽՈՆԱՐՅ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԵՐԿՈՒ ՀԱՐԻՐ ԻՆՆՈՒՍՈՒՆՈՒԹԵՆՈՒՅԵՍ

Առ Արամ

Որքերը... Մեռնողներու կողմէն ապրողներուն խնամոց և հոգատարութեան յանձնուած աւանդներն են անոնք : Ուստի միանգամ ընդ միտ պէտք է գիտնալ որ այս սրտածմելի որակականը չ'եմ գործածեր անոնց համար, որոնք - և՛ դժբաղդաբար ստուար թիւ մը կը կազմեն ընկերութեան մէջ - Եթէ ոչ բաղձացած, գէթ տեսակ մը անտարբերութեամբ - չ'ըսելու համար բերկրութեամբ - ընդունած են որքի վիճակը : Այսպիսիք շատ հեռու են աւանդ ըլլալէ և շատ մօտ պէտք ըլլալու... :

Ճշմարիտ որքերը անտէրներն են, և անտէր են, վառնիլ դրամ չ'ունին : Եթէ փոքր ինչ հարստութիւն ունենան ոչ միայն անտէր չ'են մնար, այլ և տէր կ'ըլլան... : Առանց չափազանցութեան, յիտուն հազարէն աւելի ունի մեր ազգը որքերուն ճշմարիտ տեսակէն : Անոնք մեզի համար բիրապատիկ նուիրական աւանդներ են, անոնց բնական խնամակալները՝ ծնողները տիրապետական անողը օրինաց զոհուած ըլլալով ամբողջ ազգի մը հաւանական բարորութեան սիրոյն :

Այդ անկեղծ օրէնքն և ճակատագրապէս ինկածներուն որքերն են որ - ի բաց առեալ քրթմական վրաններու և թրքական հարէմներու մէջ բանտարկուած այլապէս տիրապետիկ որքերը - կը ծանրանան ազգին վրայ : Բայց այս բնութիւնը ոչ դիրատար հանդամանք մը չ'ունի, բաւական է որ իւրաքանչիւր - Հայ անհայ ըլլալ պարտաճանաչ միայն այնքան, որքան ընդնշարուած կարկանդակէն իրեն բաժին կը յուսայ կամ յուսացած էր, իր յայտն անվիճելութեանը խորապէս համոզուած... :

Այդ ընտանեզուրկներով պիտի վերահաստատուի սասանած ազգը : անոնցմէ պիտի վերուժ ճանայ անդամահատուած հայութիւնը : անոնք պիտի վայելեն այն երկանկութիւնը, որուն հակաբնապէս սուղ ժամանակի մէջ իրականանալուն աշխատիլ կարծեցինք, կամ անոնք պիտի լիուլի ճաշական դառնաթոթոյն պտուղը մեր ցանածին : Անոնց մի քիչ բռնաբարուած ճակատագիրը ինչ որ ալ ըլլայ-լոյս կամ խաւար՝ աղատութիւն կամ գերութիւն-մեր՝ ապրողներուն՝ պարտականութիւնն է անոնց ջամբել օղմորտէն խորհելու և ըստ կարելոյն յաջողապէս գործելու այն սկզբունքը որ լոյսէն չ'չլանար և խաւարէն չ'մոլորիր : որ աղատութեան մէջ չ'ջոխանար և գերութեան մէջ չ'ջխտիր : շարաբաղդութիւններ, որոնք կը բաւեն այդ մը բնաշինը ընել ա-

ւելի ապահովապէս քան անհնամեծ աղէտները :

Անշուշտ ազգապահպանութեան սրբագոյն նպատակին հասնելու համար է որ աշխարհիս շորս կողմը մեղադրեալը հիմնեցին որբանամական ընկերութիւններ, իրեն անվերջ միջոցներ հաղորդակցութեան որբերուն և ժողովուրդին միջև : Յիշեալը - կերութեանց մէջ առաջնակարգ գիրք մը գրուած կերեւայ - գէթ Եգիպտոսի համար - Գահիրէի Որբասիրաց Ընկերութիւնը, որուն երկամեայ հաշուակիւրը տեսնուեցաւ « Արշալայ » ի 224 թուոյն մէջ :

Անոնք միայն, որոնք մի որ և է բարեգործական նպատակի համար հանգանակութիւն բացած կամ նուէր հաւաքելու ձեռնարկած են, անոնք միայն գիտեն թէ ո՞ր աստիճան անխնայ եռանդ, անվատ կամք և բուռն ճիգ հարկ եղած է ձեռք բերելու համար այն քսան երկու հազար շրջի մօտ գումարը, որ ընկերութեան անդամներուն դափնեպսակն է :

Մովորութիւն չ'ունիմ յանչափա ներդրելու որ և է արարք մը, որ՝ որքան ալ բարձր ըլլայ լաւ բնաւորութեամբ մարդկային պարտականութեան տահմանէն անդին չ'անցնիր, և չ'ընար անցնիլ : Ուստի թող ներդրմիտ ըլլան այն անձինք որոնք թերեւս մի քիչ աւելի անբոժաւուր բառեր կ'սպասեն ինձմէ : Այդ բառերուն յարգախառնած արձագանքը երախտագէտ որբերու սրտին խորէն պիտի հասնի որ մը իրենց աւանդին :

Սակայն եթէ չ'ողմելէ կը խորհիմ, հանրային գործ մը գնահատելու և քննադատելու իրատունքէն չ'եմ հրաժարիլ - անշուշտ կարողութեան ներած չ'ափով - Կան նաև հանրային հարցեր, զորոնք կ'սիրեմ նոյն իսկ խժրածել : Այս վերջին դասակարգին կը պատկանի որբերուն խնդիրը, որ ինչպէս ցոյց տուի՝ մեզի համար կենսական շահեկանութիւն մը կը պարունակէ իր մէջ :

Արդ, վերոյիշեալ հաշուակիւրին ելքին կողմը կը տեսնուի երկու հարիւր իննսուունուօթիսուկէս զըշի գումար մը, սր չ'համապատասխաներ ընկերութեան կողմէն չ'աւելուած այն հոգատարութեան, որ նախագահած է դրամ հաւաքելու միջոցներուն ռեսուրսներով : Այդ փոքրագումար ծախսը անտեղի է և անպէտ, և է իմաստ որբերուն : Եւ - աշխարհիս որ կողմն ալ երթանք - ինչ որ հանգամանք ունի : կարտներուն վնասելու, դա կ'ըլլայ յանցանք :

Ըստ հաշուակիւրին 297, 50 զուրու չ'են երկու հարիւր վճարուած է « Արշալայ » լրագրոյն յայտարարութեանց համար :

Ահա մեր գիտողութիւնները :

« Արշալայ » ազգային թերթ մ'է : Որքերը՝ ազգին շիւրն են : այնպէս որ « Որք » բառով պէտք է հասկնալ ազգին սիրտը, ուղեղը : Հետեւեալը անհասկնալի և անհերքելի է յիշեալ ծախսը : Իսկ մնացած իննսուունուօթիսուկէս զըշի համար կը կարեւորը : « այս առթիւ գըրական աշխատութեանց վարձատրութիւն » :

Ո՞ր առթիւ : Չայդ գիտնալու համար գիտնեք վերի հատուածին, որ կ'ըսէ :

« Հայկազ զրկուած տղազրեալ շրջաբերականներու տուժար, թերթ, հեռագիրք և տպագրութեալ ընկալազրեալու ու փոխադրութեանց ծախս 620, 40 » :

Եւ անմիջապէս ետքը :

« Այս առթիւ գրական աշխատութեանց վարձատրութիւն, - 97, 50 » :

Հակառակ անտահման յօժարամտութեան « այս առթիւ չը հանելուկ մ'է և հանելուկ մը պիտի մնայ ինձի - և թերեւս շատերուն - համար, եթէ ընկերութեան Մեծ . վարիչները չ'հաճին մեզի օգնել » :

« Այս առթիւ » ին մէջ առ/իք մը չ'եմ տեսներ ոսկի մը նետելու :

Արդարև, քանի որ Հայկազ զրկուած շրջաբերական, տուժար, ընկալազրեալ և չ'աւելն ծարպուրած էին, ինչ տեսակ գըրա-

կան աշխատութիւններ վարձատրուած են : Երկարեքական ըլլալու յատկացուած գրութեան մէկ հատիկ պատճէնը խմբագրել, թէ պահարաններու վրայ հասցնելը գրել... :

Պ .

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ . - Տիար Պ . ի յօդուածն, որչափ ալ « Արշալայ » ը ակնարկող պարունակութիւններ ունենայ, իբր անկողնակալութեան պարտականութիւն կը հրատարակենք : սպասելով որ, Որբասիրաց Ընկ . Պատ . Գործ . Ժողովն, եթէ հարկ դատէ, պէտք եղած բացատրութիւնները ապ, հետաքրքրելուրը գոհացնելու համար Հակառակ պարագային մէջ « Արշալայ » ի վարչութիւնը իրեն վերաբերած մասերուն համար միայն իրեն կը վերապահէ պէտք եղած լուսարարութիւնները և տեղեկութիւնները ապ, հանգաբարեցնելու համար ա'յն միտքերը, որոնք ինչպէս կ'երեւի, տակաւին ըմբռնուտ ատակ չ'են դէսն ու դէնը :

ՈՄԲ .

ՏՈՐՈՒՄ Ա . ԵՄԲԱՐԵԱՆ

Այս անգամ հաստատուած ըլլալով ի Գահիրէ, կը բնակի Շարա Ապտիւլ Ազիզ փոքրը, Ապտինի պահականցին քով, թիւ 4 բնակարանի երկրորդ յարկը :

Հիւանդ կ'ընդունի ամեն օր կէս օրէ առաջ ժամը 9 - 11, իսկ կէս օրէ յետոյ 3 - 5 . Ուրախ օրերը աղբասաց ճիւղ գարմանում :

Մանաւոր խնամքով կը դարմանէ ներքին գործարանաց և մեղանցքի (ափրոզիտեան) հիւանդութիւններ :

ՆԱՄԱԿԱՆԻ

Թղթ-ԱՅՐԱՐԻ ԵՒ ՆԱՄԱԿԱՆԻ պարունակութեանց պատասխանատուութիւնները, ինչպէս առկէ առաջ ալ ծանուցած ենք, անոնց հեղինակներուն կը պատկանի :

ԽԱՉՈՒՆԻ ԵՒ ԳԱՆՈՒԻ ԻՐԵՆ ՊԵՍ ԾԱՆՈՅ

Իրմ յե՛ք անոնցմէ որ... :

Եթէ ոչ յեղափոխական գոնէ իբրև հայ չէի կ'ընար լուծութեամբ անցնիլ հրատարակա յայտնուած հակաշեղափոխական անձոնի և անհեթեթ գաղափարի մը հանդէպ, որ առաւել կամ նուազ վնասակար ըլլալէն քատ կտակածել ըլլալու ամեն հանգամանքն ունի իր մէջ, խորհրդաւոր և անմեղելի հեղինակին խելագար խելագատակին տրտաբար յայ ձափուտըները :

Ազգային ներկայ ճգնաժամին՝ ուր, ամեն հայ կ'զգայ թէ ժամանակն է որ վերջ տրուի տակուլութեան, և եղբայրական իրկընդիստ . նուժով մը միտցած ըստ կարելոյն աջակցել փրկութեան գործին, զգուսնքով կը տեսնուի թէ տակաւին կը գտնուին եղբւր սեւ սիրտ : սեւ հոգի որքեր, որ չ'գիտցուի ինչ անասնական զգացումէ մղուած կը ներքին կարեցեալ քննադատութեան մը քողին տակ նսեմացնել ժողովրդեան տղն յեղափոխութիւնն ու յեղափոխականները, և այս եղանակաւ հանրութիւնը վըհատեցնելու օգնելով շատուած տեսնել կը փափաքին գործող ուժերը :

Հայութեան ծոցէն ծնած, այլասեւած խժերն են անոնք, որ անամօթարար և անխղճօրէն կը յանդգնին եղած անձնուրի թիւները և վտանգը արհամարհող կեանքերու գործունէութիւնները ուրախալ, ինչպէս ամեն պարտապատկանութեամբ թշնամաց գնդակներուն կուրծք տընող անձնուրացները ինչպէս և յեղափոխական կազմակերպութիւնները ծաղրելու կ'ըլլեն :

« Արշալայ » ի 225 թուով « Սաչօ-Չան » ծածկանուամբ հրատարակուած գրութեան մը յետագայ պարբերութիւնները, ինչ գիւնարին մը ասածուժով են ինչ նենգամտութեամբ գրուած ըլլալը ընթերցողաց ծանօթացնելու համար նոյնութեամբ կ'արտայայտեն հոս :

Գրողը կ'ըսէ . « Մեր վերջին, արքայական հարստութեան կործանումէն ցաթմ միջոյ ու միջոտ օտարներու գործիք ըլլալէ չ'ընք դադար... միեւնոյն տըրեալազգեցիկ երեւոյթի յարձամ կը կրկնուի » : Յետոյ « ց'մաս պիտի դատապարտեմ յեղափոխութեան այն պիտեք որ ազատ երկիր նըս-

տած ալ ու ձախ պատգամներ կ'որոտան և հուր կայծակներ կ'շնայեն թշնամիներ զլիւն... խօսքով և գրքով, բարեկամ, ո'չ գործով, չ'խաբուիս » :

Կ'աւելցնէ նաև « խաչագողներ » ը, ոճրագործները, քահանները որ անձնական շահն ու հանգստութիւնը, փառասիրութիւնը կէս նպատակի ունենալով, ամբողջ ազգի մը մահուան պատճառ կը դռնան » :

Եւ պիտի գտնան... որեքիցիկ Սաչօ-Չան, քանի նմաներդ դեռ կը պահեն իրենց աղտոտ գոյութիւնը, քեզ նման խրտուելակներ չէի'ն որ՝ գարդ յեղափոխութեան ոգի մը հալածանքներուն օժանդակեցին, քեզ նման սպառնչելները չէի'ն որ յեղափոխականին ամեն մէկ քայլին նետեւելով անոր սայլաբուրը գրեթե ցուցին, և վերապէս քեզպէսները չ'էի'ն որ՝ ապուլի մը երեւոյթը հազած սողոսկեցան ամեն խաւերու մէջ դուրս բերել վանալով գաղտնիքներ որ իբրև սրբութիւն ազնիւ սրտերու ի պահ յանձնուած էր :

Լո՛ւ. Սաչօ, պէտք է լռեն նաև ծանօթ նըմանները, որք չէք անոնցմէ որ անկեղծօրէն և ուղղամտութեամբ քննադատել գիտեն յեղափոխական գործունէութեան մը այս ինչ կամ այն ինչ սխալը :

Դուք չէք անոնցմէ՞ որ ազգութեան կամ յեղափոխութեան պատիւը բարձր տեսնելու նախանձնիկները թիւները կ'ընդունան անվերել կերպով մասնանջել և զիմակազներ ընել կեղտոտ գործիչ մը, ըլլալ յեղափոխական կամ ոչ :

Դուք չէք անոնցմէ՞ որ առջադրուած նըպատակի մը սրբութիւնը միայն նկատել կ'ունենան, ո'չ թէ անոյ յալող կամ ձախող վերջաւորութիւնը :

Դուք էք անոնցմէ որ կըրարական կուրներու հանդիսատես կ'ուղէք ըլլալ վայրագ կիրքերդ գիւնարին ծիծաղներով յազցնելու համար : Եթէ այսպէս չէ, ինչո՞ւ սակէ առաջ մէջտեղ չ'կայր և Սաչօ, երբ յեղափոխական կուսակցութեանց միջիւ երտութիւն և նոյն իսկ վճճ կար, ի՞նչ միտքով այսօր առթիւ կը սեպէք երեսուն գալու, երբ՝ անոնց մէկ զրօշակի տակ եղբայրակցելուն մտաւուտ և մեծ հաւանաւանութիւնը կը տեսնուի :

Ո՛չ ինչո՞ւ, ո՛չ դու, ո՛չ մեզի ծանօթ համախոնեղ պիտի կրնան կասկածել յեղափոխութեան յատկաբար սրտացուցումը : տխրող ուղեղներդ թափափաք արտադրութիւնները, միաքեք՝ գաղափարներ պղտորելու անգոր պիտի ըլլան այսուհետև :

Յեղափոխութեան և յեղափոխականներուն մասին խօսելու համար պէտք է կտակածել զոյներու երեւոյթներէն զիմ եղով ըլլալ ինչ որ, քեզ մօտ կը պակսի այդ արբանամանութիւնը . « Սաչօ » :

Կը յուսամ թէ՛ այս քանի մը սողորէն օգտուելով յետ այսու նախապալից նախապատկութիւններդ քեզ և ծանօթ ընկերակցուդ պիտի վերապահու, մեզ չ'ստիպելու համար որ իսկական գոյնը ցուցադրենք :

ԱՐՄԱՆՈՅԻ

Լոնտոն 11 Նոյեմբեր 1901

Տէր Խմբագրիւր Խնդրում ենք, սոյն յօդուածը զետեղել Ձեր ազգօգուտ թերթում :

ՀՍՑ ԽԱՉՈՒՆԻ

Մի ոմն իրաւասուր Մամստուն, որի կեանքի նշանաբանն է ուրիշի ախտանքի պղծելը, քովը ազգիլ այս կողմ է իսկ կողմ պատեղով խաբում է խեղճ, անմեղ հայերին և նրանց ձեռքից փողերը խեղճ անհետանում : Այդ հրէշ արարածը մի քանի անգամներ այցելած է եւրոպայ, ի հարկէ ուրիշների փողով, և վերադարձած Ամերիկա . խեղճ, անմիտ, երկրից փախած և եւրոպա պատասնող, հայերի փողերով Անա թէ ինչպէս վերջին ժամանակներս այդ ըստորաբարը սողունը հանդիպելով Ալէքսանդրիայում (Եգիպտոս) մի քանի ազգայիններին, համոզել է նրանց, որ եթէ իրա հետ Ամերիկա դընան, ինքը յանձն կ'առնէ նրանց շարաքական 12 սօւլթով գործ գտնել, պայմանաւ որ իրա ճանապարհածախսը անուր վճարեն : Նրանցից մին սակայն, ունենալով իւր մօտ 25 ոսկի, աւելի աչքի է դարկում : Սոյն խաբարայ պարտք փայլուն խտտուններով յաջողում է ճանապարհուել նրանց հետ, գալով Marseille առանց ոչ ոքի տեսնելու (որովհետեւ նրա կարծիքով այն տեղի հայ սմարտները խաբարիչ մարդիկներ են եղել (հասկանալի է) անցում է Paris, որ տեղից London եւ, ամաց թողելու այն պարտքին որ 25 ոսկի ունէ, մտենալու այսուհի գրուհող հայերին, ուղղակի սանում է Liverpool, այն տեղ վերցնելով պարտքից 25 ոսկին և մին-

չեւ իսկ բէնիքները չ'ընտանացանալով դրանով ժամացոյցը եւս վերջնում ստեղծ որ Ticket-ը անհետ կ'ստի գնայ եւ անյայտանում է և ինքն զորք Պր. Ս. Յարութիւնեան ճարտարատեսիկութեամբ է բաշխուի 15 օրուայ ճանապարհորդութեան յետոյ հասնել Լոնտոն բոլորովին հիւանդ վիճակում : Միւթիւն մի ճանապարհածախս հոգալով յանձնարարեց Բարիքի Հայ Աղքատախնամ Ընկերութեան, որ տեղից ուղարկուի եւ ներկայանայ :

Մամստան բնիկ ինքնուրուի Մէզրէ Թաղիցն է, երկայնահասակ, միջագոյն եւ գէր կազմուածքով մօտ 30 տարեկան :

Վերջերս, Ալեքսանդրիա գտնուող մի հայ գործակատար, այլապէս անար, Ռուբէն Սամուր-գաչեան անունով, համոզուի է մի երիտասարդի նրանից 1 1/2 ոսկի առնելով թէ՛ Լոնտոնում Պատ. Գրիգորեան մասնաւորապէս հայեր ամերիկա ուղարկելու համար ապաստանարան է բացել : (Ի դէպ առնելով որ այդպէս մի ապաստանարան չկայ) Երիտասարդի ձեռքը մի նամակ առնելով որի մէջ յանձնարարուած է պատուելիին առնելով « լսելով ձեր գովելի ազգաբերութիւնը ինչպէս եմ այս պարտին ուղարկեցէք ամերիկա : » Լսեցէք ընթերցող այսպէս անխիղճ կերպով ալ վարուիլ կը լինէ՞ գէպի մի ազգային, որը, ինչպէս ինքը ասուած է, հանդիստ գործ ունի եղել եւ այսօր Լոնտոնում խեղճ գրութեան վէջ է : Պարտնեմ, յանուն մարդկութեան, յանուն ազգայնութեան վերջ տուէք այդ ամենատար առեւտրի, մի քիչ խեղճ ունեցէք, նախ մտածեցէք յետոյ գործեցէք եւ այդպիսի երեւակայական ապաստանարաններ չ'ընելուց ետ կ'ստեղծուի : Այս այսպէս լինելով զգուշացնում ենք հայ հասարակութեանը այդպիսի խտրութեայ գործակատարներին :

Ի Դիմաց Հայ Գործ. և Բ. Ս. Միութեան Վարչութիւն
Ատենապետ Ատենազօր
Ռ. ԿԱՐՍՊԵՏԵԱՆ Յ. ԹԻՒՐԱՊԵԱՆ

Ա. Ա. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԼՈՒՐԵՐ

Ձմիւռնիդ Լուսաւորչեան Հիւանդանոցի Պատ. Յանձնաժողովոյ անդամաց կողմէ « Արշալոյս » հասցէին զրկուած է շրջաբերական մը, զոր կը հրատարակենք այսօր, և ընդարձակ տեղեկագիր մը որ տեղւոյն Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցին գոյութեան սկզբնականութենէն ց'այսօր տեղի ունեցած անցքերը մանրամասնօրէն կը նկարագրէ և կ'ստեղծուի զարգացող և օգտակար ծանօթութիւններ կը պարունակէ : Երկարեակունը մեր ընթերցողաց ներկայացնելով, յարմար առիթներու կը վերապահենք տեղեկագրին ալ ինչ ինչ շահեկան և հետաքրքրաշարժ մասերովը դրացի :

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Տ.

Իգմիրի Ազգ. Հիւանդանոցը, որ վերջացող տարւոյն հետ կը բոլորէ հարիւրամեայ ջրջան մը, իր դարաւոր գոյութեան ընթացումը թափանցիկ թափանցելով կ'արժէ որ ունենար իր Երկրեանի հանդէպ, իր երեսնամեակութեան համազգային ցոյց մը, եւ որպէս յայտարարուի այն իսկ իսկապէս պիտոյն եւ համակրանաց, որով ջրջանաստեղծ աչն յընթաց իր հարիւրամեայ գոյութեան, եւ որոն մէջ միայն կարելի է չիմտել իր հասարակութեան եւ իր համակրանութեան խորհրդարան գայտնելիք : Ազգին տուելը յանձնարար կենդանի կորոյ մէ, կանգնուած յանուն գրութեան եւ մարդասիրութեան, որոն քիսմիտ ու պարտաւիր որքան իգմիրացոյ՞ ոչ նուազ իրաւաբ կը պահանջի նաեւ ընդհանուր Հայութեան, որոն մասնաւոր հոգաւորութեան եւ իրաւունք ինքնուր առարկան ջրջան երեքի յէ դարձած : — Եւ երբ ի միասին առնուի սու պարագան թէ բարեգործական այդ շինքն, ի սկզբանէ իր հասարակութեան, իր յարկերէ միջոց տրամաբան եւ մասնաւոր պահած է ոչ միայն Հայ, այլ եւ օտարազգի հիւանդներու եւ ախտաբանութեան հանդէպ առանց ազգի եւ կրօնի խտրութեան, այն աստիճան իր նշանակութեան մէջ առնելի կը բարձրանայ, եւ իր հանրային հանգանակով

անվիճելի իրաւունք մը կ'ստանայ նաեւ ընդհանուր մարդկութեան երեսնամեակութեան ջրջանումնէրու վրայ : Անոր պատճառները որ ճշդագոյն ձեւով հրատարակութեան տրամաբան է ի գիտութիւն հասարակութեան, յատուկ յիշատակարան մէ, որ բարձրարարութեան կը հաշտեցնուի անոր ընթացումը անհայտնելի օգուտները :

Անս աչս նկատուելով, Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան առաջարկութեան եւ Ազգ. Վարչութեան որոշման վրայ ձեռնարկուած է կ'ստանալ Հիւանդանոցի հարիւրամեայ Երկրեանի հանդէպ, որ ճշդագոյն ձեւով յայտարարուի 1902 Մարտ 31 ին Ս. Լուսաւորչի տնայնացող կ'իջարկի օրն, մասնակցութեամբ Հայ եւ օտար մասնաւոր ներկայացուցիչներու եւ նմանօրինակ հասարակութեան վարիչ մարմիններու :

Գլխաւոր կէտք, զոր ամեն ձգնարիս Հայոց հասարակութեան կը յանձնուի, ս'ա է թէ Իգմիր, հարիւրամեակութեան ընթացումը, վերջին տարիներու մէջ մասնաւոր ընթացումը երկրորդ կէտքն է որ եղած է աղիւսիկ պակասութեան Հայտնու համար, որով գուրդագուրդ քաղաք կը դիմեն ապրուստի միջոցներ ձեռնարկուելու, եւ որով շատեր յանդէպ իրենց մէջ սխառացած Հիւանդանոց կը փոխարինուի թոյլ եւ դարման գտնելու համար : Իսկ ինչ է երեւակայելի թէ այսպիսի անխտարախիտ հարկի մը առջեւ որքան կը սուգանայի հիւանդանոցի արդէն իսկ անձուկ պիտանէ, եւ թէ ո՞ր ասիական կը դժուարանայ այն խոչնդանէ կ'ստանալ իր իրաւորութեան պարտաւորութիւնը : Հետեւաբար պատասխանատուութեան ընդարձակ թափանցումը կը ծանրանայ մօտիկ եւ հեռուարեան ամեն ազգայնաց վրայ՝ Երկրեանի սոյն գեղեցիկ առիթով եւս ներքապէս առարկան կ'ստանայ այդ հասարակութեան անվարար անխտարախ պակասութեան համար անոր հանդէպ իր պատասխան գոյութիւնը :

Իրաւական նմեքի նուիրատուութիւն, նաեւ, հետագիւր եւ այլն պէտք է ուղղել Յանձնաժողովոյն ստեղծուած եւ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան Աստեղացեալ Մեծ. Նշան ԵՔԵՆԻ Յ. Հարեցի/ հետեւեալ հասցեով :

Մեծ. Նշան ԵՔԵՆԻ Յ. Հարեցի Ազգ. Հիւանդանոց — ԻՉՄԻՐ Mr. NICHAN H. HARENTZ Hôpital Arménien Smyrne

Տարակոյս չունիլի թէ Երկրեանի սոյն հանդէպ անխտարախ յարգանքներու արձանակութեամբ, արդէն պիտի քաղաքներու նուիրատուութեամբ :

ԱՆԿՍՄԻ ԶՄԻՒՆԻՆՈՅ Ս. ԼՈՒՍԱՎՈՐ. ԶԵԱՆ ՀԻՒՄԻՆԻՆՈՅԻ Նախագահ. ՄԵԼԻՔ. ԱՐԲԵՊ. ՄՈՒՐԱՍԵԱՆՑ ՄԱՍԻՔՈՍ ՊԱԼՈՉԶԵԱՆ ՍՏԵՓԱՆ ՍՊԱՐՔՈՒԼԸ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԱՊԵԱՆ ՂՈՒԿԱՍ ՆԱՍԻՔՈՍ ԳԱՐԵԳՈՐ Ե. ԲԱՍՉԶԵԱՆ ԶԱՐԵԶ ԹԱԳՈՒԳԵԱՆ ԳՈՂԱՍ ՊԵՐԿԱՍՄԱԼԵԱՆ ԶԱԿՈՐՃԱՆ ՊԱԼԵՔՃԵԱՆ ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻԶ ԱԻԵՏԻՍ ԱԻԵՏԻՔԵԱՆ ԱԻԵՏԻՍ ԼԱԼԱԵԱՆՑ ՆԵԱՆ Ե. ՀԱՐԵՆՑ

ԺԱՄԱՆՈՒՄ. — ՏԵՐ և ՏԻԿԻՆ Արմենակ ՊԵՂԵՐԵԱՆ անցեալ շաբթու քաղաքս վերադարձան :

Արմենակ ԵՔԵՆԻՍԻ ՊԵՂԵՐԵԱՆԻ այս վերադարձին առթիւ, ո՞չ միայն իր բազմաթիւ համակրանները ուրախ են, այլ նոյն իսկ շատեր ալ կը յուսան թէ՛ ըստ առաջնուած շատ մը գործաւորներու ապրուստ հայթայթելու միջոց եղող ընդարձակ գործերու ձեռնարկէ, և այդ իսկ է պատճառ

որ ուրախութիւն մը կը տեսնուի իր նախկին պաշտօնակներու դէմքին վրայ և ամեն անոնց մանուկանք ունենալով որոնք իրաւորութեան անհետնելի թէ, սակայն գործի նուազութեան ստեղծուած քիչ քիչ ծաւալած կը մնան :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԹՐԱՆՍՎԱՆ Պատերազմական նախարարութեան կողմէ հրատարակ հանուած ցուցակի մը համեմատ, անցեալ Հոկտեմբեր ամսոյ մէջ Անգլիացոց կորուստը, եւս վերադարձուածներու թիւը մէկտեղ, եղած է 159 զորավար և 2610 զօրք : Այս թիւերը բարդուելով պատերազմի անցուած անցեալ կորուստներուն կը հասնին 78,016 մարդու, որմէ երբ զեղուի թիւը անոնց՝ որոնք կ'ընտրուի կը լինի զէնքի ծառայել, զուտ կորուստը կը լինայ 22,773 հոգի :

Քանի մը շարժումն լուս. թիւնէ վերջ, որմէ պահ մը կ'արժուեցաւ թէ մեռած է, Տր. Ալեք երեւան եկած է Օրանժի արեւելակողմը :

Լորտ Բիչնէր անմիջապէս քանի մը շուկաներ ճամբայ հանած է անոր հետքը փնտրելու համար :

« ՏԵՂԻ ՄԵՂԻ » արժանահատ աղբիւրէ քաղած մէկ զբոյցին համեմատ, նախագահ Բիւրակէր արամազիք է հայտնութեան համար բանակցել, հետեւեալ պայմաններով :

— Անպայման ազատաշնորհու Քափի ապստամբներուն :
— Երկու հասարակապետութեանց հողէն Բրիտանական զօրքերուն հեռացումը :
— Բանդուած ազարակներու վերաշինութիւնը, և կամ վճարում՝ նիւթական կորուստներու փոխարէն :

— Պրանսայի և Ռուսիոյ երաշխաւորութեամբ գաշնադրութիւն մը, որով բացարձակ ինքնիշխանութիւն արուի երկու հասարակապետութիւններուն քառագոյն գրօշի տակ :

— Անդրիւյ թողուի Ռիքիդրա Բանի վայրը, իբր միւլ առգանք թրանսպիլի կողմէ հատուցուած : Բանակցութիւնները պիտի կատարուին Բիւրակէրի հետ, Պօէր կառավարութեան պիտի ունեցած հանդամանքովը :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

ՍԱԳ. ՄԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՓԵՏՏՈՒԻ

Պ. Սոսթէն Զարլի Բոյրիկ պատուոյ այցելու զիւղացի մը, այս օրերու Մուքիթար փողոցը թիւ 67 պատուով կ'երթայ գիշերը անցնելու համար :

Անկողին մտնելու վրայ էր, երբ իր սենեկին կից գտնուող սենեակէն օգնութեան խեղուի աղաղակներ կը լսէ :

Պ. Սոսթէն Զարլի որ քաջ և միանգամայն վեհաճն մարդ մըն էր վայրկեան մը իսկ չ'վարանիք. կ'ենթադրէ թէ իր մօտը մարդկային արարած մը կը խոչտանգուի, ո՞նի մը կը գուշակէ և անմիջապէս անկողինէն վար ցատկելով առանց հագուելու գուրս կ'ելլայ և քովի գուրս բանալով ներս կը մտնէ :

Երեւակայեցէք զարմանքը, երբ սենեակէն ներս մտնելուն պէս մանկամարդ կին մը կը տեսնէ գիշերային արդուզարդով որ ապշած կը հարցնէ իրեն թէ ինչ կ'ուզէ գիշերուան այս պահուն :

Պ. Սոսթէն Զարլի, շուարած մէկ քանի խօսք թողնելով կը շնայ ինքզինքը արգարացնել. բայց տեսնելով ծիծաղելի դառնալ, կ'ուզէ կծիկը գնել

Դժբաղդար ժամանակ չ'ունենար, երկու մարդիկ յանկարծօրէն սենեակէն ներս կը խառնեն :

— Աւարակ, կը գոռայ մին, կնոյս հետ ինչ գործ ունիս :

— Սրիկայ, կը պոռայ միւսը, քոյրս անպատուել կ'ուզես :

Եւ շուտով հարուածներ կը տեղան դժբաղդ Սոսթէն Զարլի վրայ որ կը շնայ իր սենեակը ապաստանի :

Բայց հոն ալ իր հակառակորդները զինքը կը հալածեն և մարդոց մին անոր հագուածները տեսնելով, բարկութեան շարժումով մը զանոնք պատուահանէ փողոց կը նետէ :

Պ. Սոսթէն Զարլի, կողերը խորտոխաջ եղած վերջապէս կըցաւ անոնց ձեռքէն ազատիլ իր առաջին գործը կ'ըլլայ փողոց իջնալ հագուածները փնտրելու համար : Իրօք ալ կը գտնայ զգետները, բայց զբոսայտները խոցմտօրէն պարպուած վիճակի մէջ, մարդը դրամապանակին մէջ 200 ֆրանգի դուրս մը ունի եղեր :

Նախատուած ամուսինը և եղբայրը պարզապէս երկու գողեր էին որոնք Սոսթէն Զարլի սենեակիցին մեղաւորութեամբ զինքը կ'ընտրուած էին :

ՀԻՒՆ ԵՉՈՎԱՅԻՆ ԱՌՁԻՒ

Պ. Հարտուէի երկու հատ զուարճալի անէքտոթիները կը քաղենք « Մայիսեան » Պրանքիթի ձերտնի հրէայ մը Մօզնիթալ անունով, կը մեռնի և Գնովային առջիկ կը ներկայանայ :

Տրտուած տխուր և պայանձկոտ կերպարանք մը ունի ԵՏՈՎԱՅԻՆ — որ կ'երևայ թէ լալկանները չ'սիրեր — զայն շատ գէշ կ'ընդունի :

— Աս ինչ երեկոյթ է մարդ, ինչու այս խեղճ ու կրակ կերպարանքը :

— Մ՛հ տէր, եթէ գիտնայիք քաջածն :

— Ինչ կայ որ :

— Տէ՛ր, զուակա քրիստոնեայ դարձեր է :

— Ի՞նչ զուակա ալ քրիստոնեայ եղաւ, ապ՞ուշ :

Ապա ԵՏՈՎԱՅԻՆ կրօնկները դարձնելով և ուսերը ցնցելով կը մրմնջէ :

— Ինչո՞ւ է ինչ է այս ծերուկը :

Պ. Հարտուէ կը յիշատակէ նմանապէս Չարիքի Մաղոթի կալիցեան վեպերուն մէջէն հատուած մը, որուն մէջ կը ցուցնէ գիւղացեան մը սեղանի մը առջև նստած, մինչ գեւ հրէայ գիւղացի մը անոր առջև ոտքի վրայ կեցած գործի մը վրայ կը խօսակցէր :

— Ա. Կ'ընէ գիւղացեան հրէային, պընակի մը մէջ գրուած ժամգոյնի (խօշի միտ) շերտ մը երկարելով անոր, նստէ՛ կ'եր :

Գիւղացին կը նայի անոր բայց տեղէն չ'շարժիր :

— Ինչ կ'սպասես, չ'ուտես :

— Ատուածս կ'արգիլէ, խօշի միտ ուտելու :

— Ատուածդ աւանակին մէկն է :

— Ներեցէ՛ք, անոր կ'ընէ հրէան խոնարհաբար, յանցանքը իբր չէ. ձեզի պէս բազմ ունեցած չէ լաւ ծնողք մը ունենալու որ զինքը խնամէր և լաւ կրթութիւն մը տար :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պոլիս 16 Նոյեմ. — Այսպիսի եղանակով յայտարարուած է Պոլիսի արտադրութեան համար Առեւտրական ընկերութեան ինչպէս հասարակութեան է Պոլիսի գիւղացիներ են, Մակեդոնական գօմիթէի հրահանգներուն կ'ստանան, անոր դրամաւորչութիւնը ընկերութեան համար 20,000 ոսկիի գեղարուած է վերականգնելի գինը, բայց ամերիկացիները չեն ուզեր այդպիսի գումար մը վճարել :

Կ. Պոլիս 17 Նոյեմ. — Սայիտ քաջա մեծ նպարտ սնունդանուցաւ :

Փարիզ 18 Նոյեմ. — Պ. Գոնարան վաղը Կ. Պոլիս պիտի մեկնի :

ՌԱՆԱՍԷՐ հետեւեալ ծանուցումն հրատարակութիւնը կը խնդրէ իր պաշտօնակիցներէն :

ՌԱՆԱՍԷՐ ԱՄՍԱԹԵՐԲ

ԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

« Բանասէր » յարգելով ժողովրդական և գրական անձոնց դիմումները, կը խոստանայ յառաջիկայ տարեշրջանէն (1902 Յունուար) սկսեալ հետեւեալ նոր ծրագրով հրատարակուիլ .

Ա. (Բանասէր) նախ պիտի հրատարակէ ազգային յառաջադիմութեան վերաբերեալ խմբագրական տետրութիւններ :

Բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ :

Գ. Օտարազգի նշանաւոր հանճարներու գրուածոց թարգմանութիւններ :

Դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ :

Ե. Նոր հրատարակուած գրքերու վերայ քննադատական տեղեկութիւններ :

Զ. Լեզուաբանական և ստուգաբանական յօդուածներ :

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարևոր յօդուածներու վրայ դիտողութիւններ :

Ը. Գիտական նորութիւններ :

Մասնաւոր կերպով կը յայտարարենք մեր ընթերցողաց որ Յունուարէն սկսեալ « Բանասէր » վերոյիշեալ ծրագրով ԱՄՍԱԹԵՐԲԻ պիտի վերածուի, իւրաքանչիւր ամսուամբ տալով 32 էջ . ինչպէս որ կանխախոստացեր էինք . « Բանասէր » ի ինչ ինչ յօդուածները պատկերազարդ պիտի հրատարակենք :

Թերթին գինն առ այժմ նոյնը կը մընայ, այսինքն տարեկան 15 Ֆր. — 6 ամբլի . բայց թիւ բաժանորդներու բազմութիւնն զմեզ խրախուսէ այն առին կը խոստանանք 10 Ֆրանքի իջեցնել :

Մեր հասցէն է BASMADJIAN

112, Bd. ROCHECHOUART. PARIS (18)

ՄԹԱՌ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրին . — Ապահովագրի հնութեան համաձայն չահու առաւելութիւն . — Իրականաց պահպանութիւն՝ ապահովագրի վըճարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեկարգարութիւն . — Շահու բաժանում մտնէ Հին 8ԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԵՃՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ԳԻՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Ամերիկայի մեր ազգայնաց կը ծանուցուի թէ՛ Երրորդ տարեշրջանի սկիզբէն « Արշալոյս » ի Գործակալութիւնը ստանձնած են ի Շիքահօ, Մ. Մ. Գարակավուռեան և ընկ. որոնք բացի « Արշալոյս » էն .

Բաժանորդագրութիւն կ'ընդունին նաև հետեւեալներէն . ԱՆԱՀԻՏ, ազգային, գրական և գեղարուեստական ամսաթիւթ . տարեկան բաժանորդագրին տարար 2 .

ԳՈՒԹԱՆ, հանդէս հողագործական և ճարտարաւեստական, որ կը հրատարակուի փարիզի մէջ ամիսը մէկ անգամ . Տարեկանն է Տ. Յ. Եանապարտածախտով միասին :

ԱՐԱՐԱՏ մեր միակ հին կրօնական Ամսագիրը՝ որ կը հրատարակուի Ս. Էջմիածին . Տարեկանն է մէկ տարար միասին :

Նամակազրոյժ կ'ընդունին, երբ ապագրանքը 50 սէնթ և պակաս է . իսկ աւելին համար պէտք է գրամ դրկել Money orderով և կամ register նամակով . Յանձնարարութիւնները կ'անխիկ կը կատարուին : Տեղեկութիւններու համար դիմել

M. M. KARAGAVOORIAN et Co.

61 West Huron St.

CHICAGO III

ԳԱՌԼՈ Մ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐԳ

ՕՔԷԼ ՄՈՆՖԵՐԱԹՈ ԱՂԵՔԱՆԿՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ԸԱՄԼՈՎ հրատարակ, կ'ընդունինք և կ'ստանձնենք ամեն տեսակ և ամեն ազգի ապրանքայ յանձնարարութիւնք, ինչպէս ժամացոյցի, դռնարկի, արեւելեան և եւրոպական զանազան տեսակ գունաւոր և ճերմակ քարերու, Գօլոմպիական Ֆոնօկրաֆիներու, ինչպէս նաև գրուած և անգիր խողովակներու — գովառն — (մեծաքանակ) . եւրոպական նրբահիւ կողովակներու և հոտեղինաց եւայլն :

Մասնաւորապէս համաձայն լինելով Պօլսոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէլլէրեան) տան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրատարակաց վըճարայ, միշտ ի միջի ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Reproducteur Andelib (Ֆոնօկրաֆի ասեղ) որ անմրցելի է հրատարակին վրայ, և Գօլոմպիական Ֆոնօկրաֆիներու ներկայացուցիչ Մ. Պասաճեան սքանչացման առարկայն եղած է :

Մեր արամազրութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զանազան նուագներն . ինչպէս Մաննոյին, Գանոն, Ուր ևն . և Ֆոնօկրաֆի համար ստանկական եղանակներու վրայ չափուած հին և նոր վարձարեւ երգողներու ընտիր Գովաններ :

Կ'ստանձնենք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր փոխարինութեամբ :

Կը գանձենք զանազան երկիրներու փոխանակագրեր :

Բաց աստի ընկերութիւնն Լոնտոնի, Պօլսոյ, Գարիբէի, Եաֆայի և Երուսաղէմի մէջ թրգրականիցներ ունենալով, կ'ստանձնէ այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածում և արտածում :

Մեր հասցէն է CARLO M. BASMADJIAN et Cie. Okelle Monferato

Aléxandrie

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԱԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիմօրլ Օթէլի ճիշդ գիմաց, Գաթէ Տը Լա Պուրի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԸՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՑԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են և ստանցմէ մինչեւ ցարց 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյականներով և մեայլնէքով վարձատուած, Երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ


Ա.Ո.Ա.ԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առևտուանաճիգի մէջ ստացած է .

ՀԱՅԹԱՅԻՉ ԲՐՈՒՄՈՒՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍՅ

ՀԱՅԹԱՅԻՉ Ե. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՅՆԱ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յանձնաճիւղ . ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ . Վճարմանց Դիւրութիւն փոխանակութիւն ինքնաշիջ և նորոգութիւն ամեն կարգի ՍԻՆԿԵՐից

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՓՈՒԱԳՐՈՒԱԾ Ի ՊԱԳ-ԷԼ-ԻԱԼԻ ՄԱՆՍՈՒՐ ՓԱՇԱ ԽԱԼԻՉ

Մոնարքի Գեյ դերարանին ֆոլի սան վերի յարկը

ՋԻՄՆՆՆԱԿ 1 ՄԱՅՅՈՍ 1900

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒՆ

Յ. ՅՈՐՈՍՅԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ կը պատրաստուին Հայերեն և եւրոպական լեզուներով ամեն տեսակ հրատարակութիւններ, մասնաւոր խմբագրով .

Դիւրիւր, Կանոնագիրներ, տեղեկագիրներ, շրջաբերականներ, Հրատարակութիւն, Տոմար, Այցեխարտեր, Մանագրներ և այլ և այլ վճանակական յանձնարարութիւններ կ'ընդունուին յախաւոր գներով .

Յանձնարարութիւնք եղած պահուն պէտք է համաձայնեալ զնոյն կէտը կանխիկ վճարել և մնացեալը աւարտմէն անմիջապէս վերջ .

Տարաւեր թաց է ամեն օր ստատոսեան ժամը 7 էն 12 և կես օրէ վերջ 2 էն 7 ր .

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆԻ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՒՐ ԵՐԱՇԽԱՌՈՒՄԸ ԴՐԱՄԱԳՈՒՆ 1 ՄԻՆԵՐ 563,961 ՀԱՄԱՐ ՅՐԱՆՔ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարժիւնները . Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻՆԵՐ 563,961 Ֆր. որ գրեթէ աշխարհի ուրիշ որեւէ ընկերութեան մէկ միլիար աւելի է . Գ. Գ. ԳԻՐՉԻՍ ԵՒ Ժ. ՎԱԼՅԻՇ ԸՆԿ. Ներկայացուցիչը ի Գահիրէ

ԳԼՈՐԳ ԵԿԱՌՕՅ ԴԵՐ-ԴՈՐԺԱԿԱԼ Ի Գահիրէ

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՐՁԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 17 ՆՈՅՄԲԵՐ 1901

Table with 6 columns of numbers: 4746, 7670, 541, 7008, 120, 814; 1152, 1191, 1433, 1536, 1668, 2020; 2186, 2621, 3088, 4292, 4353, 4364; 4534, 4618, 5183, 5615, 5715, 5804; 6329, 7597, 8051, 9092, 9932, 9441

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ